ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 93-Լ

«15» 12 2025թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 52-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության էլեկտրոնային համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազությունների աշխատանքի գնահատման չափորոշիչները և գնահատման կարգը սահմանելու մասին» 2025 թվականի հուլիսի 21-ի N 52-Լ հրամանի Հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված 1) 2-րդ կետում լրացնել 5-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության էլեկտրոնային համակարգի՝ դատախազության տվյալ ստորաբաժանմանը վերաբերելի գեներացված վիճակագրության համապատասխանությունը «Հայաստանի Հանրապետության դատախազությունում դատախազի աշխատանքի մասին վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77 հրամանն

ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի հուլիսի 8-ի N54 հրամանով սահմանված կարգով ներկայացված վիճակագրական հաշվետվությանը:»:

2. Հավելված 1-ի 5-րդ կետում նշված «2-րդ կետում» բառերը փոխարինել «2-րդ կետի 1-4-րդ ենթակետերով» բառերով:

3. Հավելված 1-ը լրացնել 5.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված չափանիշի հիման վրա՝ «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության էլեկտրոնային համակարգի՝ դատախազության տվյալ ստորաբաժանմանը վերաբերելի գեներացված վիճակագրության յուրաքանչյուր բաղադրիչը համեմատվում է «Հայաստանի Հանրապետության դատախազությունում դատախազի աշխատանքի մասին վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի հուլիսի 8-ի N54 հրամանով սահմանված կարգով ներկայացված վիճակագրական հաշվետվության համապատասխան բաղադրիչի հետ, և որոշվում է համապատասխանության տոկոսը: Այնուհետև, բոլոր բաղադրիչների համապատասխանության տոկոսային ցուցանիշների միջին թվաբանականով որոշվում է համապատասխանության ընդհանուր տոկոսը, ինչի հիման վրա Վարչությունը կազմում է առանձին ցանկ:»:

4. Հավելված 1-ի 7-րդ կետում «5-րդ կետով» բառերը փոխարինել «5-րդ և 5.1-րդ կետերով» բառերով, «4 ցանկերը» բառերը և դրանց հոլովաձևերը՝ «5 ցանկերը» բառերով և համապատասխան հոլովաձևերով, իսկ 8-րդ կետում՝ «5-րդ կետով» բառերը փոխարինել «5-րդ և 5.1-րդ կետերով» բառերով:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

6. Հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

7. Հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության

վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**